Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

17 օգոստոսի 2017 թվականի N 35

---

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

1. Հավանություն տալ՝

1) Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարական ծրագրին՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին՝ համաձայն N 2 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՎԱՉԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2017 թ. օգոստոսի 18
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թ.
օգոստոսի 17-ի նիստի N 35
արձանագրային որոշման

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում գերազանցության խթանման և միջազգային ասպարեզում, առաջին հերթին՝ Եվրոպական հետազոտական տարածքում (այսուհետ՝ ԵՀՏ) մրցունակ ազգային գիտահետազոտական համակարգ ստեղծելուն ուղղված միջոցառումների ու դրանց արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշների ամբողջություն է:

2. Ծրագրի համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի նիստի N 20 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունով» ամրագրված նպատակադրումներն ու դրանց ձեռքբերման մարտավարությունները, 2011 թվականի մայիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի» արդյունքները և 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի» հիմնադրույթները:

3. Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության, մասնավոր բիզնեսի, քաղաքացիական հասարակության ինստիտուտների և Սփյուռքի ջանքերի զուգակցմամբ:

II. ԾՐԱԳՐԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

4. Ծրագրի տեսլականը՝ 2020 թվականին Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտը միջազգայնորեն մրցունակ, ԵՀՏ հետ ինտեգրված ազգային գիտական համակարգ է, որը խթանում է գերազանցությունը հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններում և նպաստում հանրապետության տնտեսության մրցունակության բարձրացմանը, անվտանգության ապահովմանը և սոցիալական ու մշակութային առաջընթաց զարգացմանը:

5. Ծրագրի նպատակներն են՝

1) գիտության և տեխնոլոգիաների ոլորտի կառավարման համակարգի կատարելագործում.

2) գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրում, գիտության ենթակառուցվածքների արդիականացում.

3) հիմնարար և կիրառական բնույթի՝ ներառյալ տնտեսության մեջ օգտագործվող և (կամ) երկակի նշանակություն ունեցող գիտելիքների ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանում.

4) կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի սիներգետիկ համակարգի ձևավորման նախադրյալների ստեղծում.

5) հայագիտության ոլորտի առաջնային զարգացում.

6) միջազգային գիտական համագործակցության զարգացում, ԵՀՏ-ում խելացի մասնագիտացման տիրույթի ձեռքբերման ապահովում:

III. ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ

6. Պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների իրականացման մեջ 2016 թվականի հուլիս ամսվա դրությամբ ներգրավված են եղել ընդհանուր թվով 87 գիտահետազոտական կազմակերպություններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ (այսուհետ՝ բուհ) և բուհերի կազմում ընդգրկված մասնաճյուղեր: Դրանցից 34-ը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), 21-ը՝

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության, 8-ը՝ առողջապահության, 5-ը՝ մշակույթի, 4-ը՝ գյուղատնտեսության նախարարությունները և այլն:

7. Գիտության ոլորտի պետական ֆինանսավորման ծավալները 2011-2015 թվականներին բացարձակ արժեքով աճել են՝ 9 433 092.7 հազար ՀՀ դրամից մինչև 13 922 121.3 հազար ՀՀ դրամ՝ կազմելով համախառն ներքին արդյունքի (այսուհետ՝ ՀՆԱ) համապատասխանաբար 0.25-0.28 տոկոս՝ ըստ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների (տե՛ս, Գծանկար 1): 2013-2015 թվականների



Գծանկար 1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի 2011-2015 թվականների պետական ֆինանսավորման ծավալները բացարձակ արժեքով և ՀՆԱ-ի նկատմամբ:

կտրվածքով պետական ֆինանսավորման տարեկան ծավալների միջինում 72 տոկոսը հատկացվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ծրագրերի ֆինանսավորման համար, ինչը, որպես ֆինանսավորման ձև, ըստ էության, գիտահետազոտական կազմակերպությունների և բուհերի գիտահետազոտական մասի

ինստիտուցիոնալ ֆինանսավորումն է, 13 տոկոսը՝ պետական նպատակային ծրագրերի իրականացման համար, 10 տոկոսը՝ դրամաշնորհային, այն է՝ պայմանագրային (թեմատիկ) գիտական թեմաների կատարման համար, իսկ 5 տոկոսը հատկացվել է պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին գիտական աստիճանի համար հավելավճար տրամադրելու նպատակով (տե՛ս, Աղյուսակ 1):

Պետական բյուջեի ֆինանսավորման ծավալներն ըստ ֆինանսավորման ձևերի			
Ֆինանսավորման ծավալ, մասնաբաժին\տարի	2013	2014	2015
Բազային ֆինանսավորում, հազ. դրամ	8 348 925.8	9 025 448.4	9 811 004.5
Մասնաբաժինը, %	73.02%	71.27%	70.47%
Նպատակային-ծրագրային ֆինանսավորում, հազ. դրամ	1 536 726.3	1 675 270.3	1 839 406.2
Մասնաբաժինը, %	13.44%	13.23%	13.21%
Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում, հազ. դրամ	1 106 507.2	1 515 690.5	1 333 010.6
Մասնաբաժինը, %	9.68%	11.97%	9.58%
Գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ, հազ. դրամ	441 000.0	446 400.0	938 700.0
Մասնաբաժինը, %	3.86%	3.53%	6.74%
Ընդամենը, հազ. դրամ	11 433 159.3	12 662 809.2	13 922 121.3

Աղյուսակ 1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի 2013-2015 թվականների պետական ֆինանսավորման ծավալներն ըստ բյուջետային ֆինանսավորման ձևերի:

8. Գիտության բնագավառում ընդգրկված աշխատողների ընդհանուր թվաքանակը 2011-2015 թվականներին եղել է համապատասխանաբար 5 718, 5 598, 5 230, 5 627 և 5 044 մարդ՝ ըստ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների: Աշխատողների շուրջ 75 տոկոսը հետազոտողներ են՝ նշված ժամանակահատվածում այդ ցուցանիշը կազմել է 4 458, 4 056, 3 870, 4 144 և 3 856 մարդ: Պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված ու գիտական աստիճանի համար հավելավճար ստացող գիտաշխատողների թվաքանակը 2016 թվականի հուլիսի դրությամբ եղել է 2 183 մարդ՝ 2011 թվականի 2 342-ի համեմատ՝ այդ թվաքանակը նվազել է 159 մարդով, սակայն ավելացել է մինչև 40 տարեկանների մասնաբաժինն ընդհանուրի մեջ՝ 18.4-ից մինչև 23.2 տոկոս (տե՛ս, Գծանկար 2):

9. Գիտական ներուժի վերարտադրությունն իրականացվում է հիմնականում ասպիրանտական ուսուցման ձևով՝ 2011-2015 թվականներին ասպիրանտների թվաքանակը կազմել է համապատասխանաբար 1 054, 1 104, 1 241, 1 223 և 1 178 մարդ: Նույն տարիների ընթացքում գիտության թեկնածուի գիտական աստիճան ստացել է 2 589 մարդ, գիտության դոկտորի գիտական աստիճան՝ 220 մարդ: Միևնույն ժամանակ շարունակում է



Գծանկար 2. Գիտական աստիճանի համար հավելավճար ստացող գիտաշխատողների մասնաբաժինը տարբեր տարիքային միջակայքերում 2011 և 2016 թվականներին:

ցածր մնալ հետագայում գիտության մեջ աշխատող գիտական աստիճան ստացածների թվաքանակը: Այսպես, օրինակ՝ 2006-2015 թվականներին գիտության թեկնածուի գիտական աստիճանի վկայագիր ստացածների ընդհանուր թվաքանակը կազմել է 4 498 մարդ, որոնցից միայն 16.76 տոկոսը (գիտական աստիճանի վկայագիր ստացածների չնչին մասն են կազմում օտարերկրյա պետությունների քաղաքացիները) կամ 754 մարդ է 2015 թվականի դրությամբ ընդգրկված պետական գիտական ծրագրերում և թեմաներում: Դրանցից տոկոսային հարաբերությամբ ամենաշատը շարունակել են աշխատել կենսաբանության՝ 43.09 տոկոս (131 մարդ), քիմիայի՝ 39.84 տոկոս (51 մարդ) և ֆիզիկայի՝ 36.78 տոկոս (160 մարդ) բնագավառներում՝ գիտության թեկնածուի գիտական աստիճանի առնվազն 100 վկայագիր ստացած բնագավառների մեջ:

10. Ընդլայնվել է միջազգային գիտական համագործակցությունը, մասնավորապես, շարունակվել են իրականացվել երկկողմ ծրագրեր Ֆրանսիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Բելառուսի հետ և բազմակողմ ծրագրեր՝ Արևելյան գործընկերության շրջանակներում:

Միջազգային համագործակցության հետագա զարգացման և ԵՀՏ ինտեգրման ուղղությամբ կարևորագույն քայլ էր Եվրոպական Միության հետազոտությունների և նորարարության «Հորիզոն-2020» ծրագրին Հայաստանի Հանրապետության ասոցացված անդամակցությունը, որի վերաբերյալ համաձայնագիրը վավերացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 19-ին:

11. 2011-2015 թվականներին առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հայագիտական հետազոտությունների զարգացմանը: Հայագիտական հետազոտություններ իրականացվում են ընդհանուր թվով շուրջ 20 գիտահետազոտական կազմակերպություններում և բուհերում, իսկ պետական ֆինանսավորման ծավալները 2015 թվականին կազմել են գիտության ընդհանուր բյուջետային ֆինանսավորման մոտ 20 տոկոսը:

12. Գիտական հրապարակումների քանակը նախորդ տարիների ընթացքում կազմել է՝

1) ըստ պետական գիտական կազմակերպությունների և բուհերի անձնագրավորման տվյալների 2011-2014 թվականներին հրապարակվել է տարեկան միջինում 4 464 գիտական հոդված՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականներում, ինչպես նաև 332 գիրք ու մենագրություն: Այդ ցուցանիշները 2011 թվականին կազմել են 4 362 և 273, իսկ 2014 թվականին՝ 4 619 և 437: Գիտական հոդվածների քանակն աճել է մոտ 6 տոկոսով, իսկ գրքերինը և մենագրություններինը՝ 60 տոկոսով.

2) ըստ ԷսՋեյԱր-Սիմագո Ջըրնըլ էնդ Քանթրի Ռենք (SJR-SCImago Journal & Country Rank) կայքի 2016 թվականի հուլիսի 30-ի տվյալների՝ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված գիտական պարբերականներում Հայաստանի գիտահետազոտական կազմակերպությունների և բուհերի կողմից հրապարակած փաստաթղթերի քանակը 2011-2015 թվականներին կազմել է 5 201, ինչը նախորդ հինգ տարիների համեմատ աճել է 56 տոկոսով՝ 2006-2010 թվականներին հրապարակվել է 3 323 փաստաթուղթ: Այդպիսի աճը մոտ 1.75 անգամ գերազանցում է Սկոպուս (Scopus) շտեմարանում ընդգրկված 231 երկրների 2011-2015 թվականների

գումարային հրապարակումների քանակի աճը 2006-2010 թվականների նկատմամբ, ինչը կազմում է մոտ 32 տոկոս: Հայաստանի գիտական աշխատությունների քանակը 2013-2015 թվականներին եղել է համապատասխանաբար 1 034, 1 066 և 953 (տե՛ս, Գծանկար 3-ի վերևի գրաֆիկը): 2011-2015 թվականներին ավելացել է նաև միջազգային համագործակցությունների շրջանակներում Հայաստանի գիտաշխատողների համահեղինակությամբ հրապարակված գիտական աշխատությունների մասնաբաժինը՝ տարեկան միջին արժեքը 2011-2015 թվականներին կազմել է 57.5 տոկոս, իսկ 2006-2010 թվականներին՝ 54.0 տոկոս: Այդ ցուցանիշը 2013-2015 թվականներին եղել է համապատասխանաբար 56.4, 58.4 և 63.0 տոկոս (տե՛ս, Գծանկար 3-ի ներքևի գրաֆիկը).



Գծանկար 3. Հայաստանի գիտահետազոտական կազմակերպությունների և բուհերի կողմից 2006-2015 թվականներին հրապարակած գիտական աշխատությունների (փաստաթղթերի) քանակը և միջազգային համագործակցության շրջանակներում հրապարակվածների մասնաբաժինն ըստ ԷսՋեյԱր-Սիմագո Ջըրնըլ էնդ Քանթրի Ռենք (SJR-SCImago Journal & Country Rank)-ի տվյալների (2016 թվականի հուլիսի 30-ի դրությամբ):

3) ըստ Վեբ օֆ Սայնս (Web of Science)-ի ԻնՍայտես (InCites) շտեմարանի տվյալների Հայաստանի Հանրապետության գիտահետազոտական կազմակերպությունների և բուհերի

կողմից հրապարակած և Վեբ օֆ Սայնս (Web of Science)-ում ընդգրկված գիտական հոդվածների քանակը 2011-2015 թվականներին եղել է 3 827, իսկ 2006-2010 թվականներին՝ 2 549, աճը կազմել է մոտ 50 տոկոս (ըստ 2016 թվականի օգոստոսի 8-ի տվյալների): Գիտական հոդվածների թիվը 2011-2015 թվականներին կազմել է համապատասխանաբար 713, 837, 744, 727 և 806 (տե՛ս, Գծանկար 4): Ըստ գիտական և



Գծանկար 4. Հայաստանի գիտահետազոտական կազմակերպությունների և բուհերի կողմից 2006-2015 թվականներին հրապարակած գիտական հոդվածների քանակն ըստ Վեբ օֆ Սայնս (Web of Science)-ի ԻնՍայտես (InCites) շտեմարանի տվյալների (2016 թվականի օգոստոսի 8-ի դրությամբ):

գիտատեխնիկական գործունեության բնագավառների՝ ամենաշատ գիտական հոդվածներ հրապարակվել են ֆիզիկայի, քիմիայի, տիեզերքի մասին գիտությունների բնագավառներում՝ 1 107, 369 և 277 հոդված՝ 2006-2010 թվականներին և 2 093, 439 և 232 հոդված՝ 2011-2015 թվականներին (տե՛ս, Աղյուսակ 2):

Վեբ օֆ Սայնս (Web of Science)-ի ԻնՍայտես (InCites) շտեմարանում ընդգրկված գիտական հոդվածների քանակով առաջին 10-ը բնագավառները*					
2006-2010			**2011-2015**		
Կարգ	**Բնագավառ**	**Քանակ**	**Կարգ**	**Բնագավառ**	**Քանակ**
1.	**Ֆիզիկա**	**1107**	**1.**	**Ֆիզիկա**	**2093**
2.	**Քիմիա**	**369**	**2.**	**Քիմիա**	**439**
3.	**Տիեզերքի մասին գիտություններ**	**277**	**3.**	**Տիեզերքի մասին գիտություններ**	**232**
4.	**Մաթեմատիկա**	**174**	**4.**	**Մաթեմատիկա**	**217**
5.	**Ճարտարագիտություն**	**91**	**5.**	**Կենսաբանություն և կենսաքիմիա**	**112**
6.	**Նյութագիտություն**	**74**	**6.**	**Ճարտարագիտություն**	**90**
7.	**Նյարդաբանություն**	**70**	**7.**	**Կլինիկական բժշկություն**	**78**
8.	**Կլինիկական բժշկություն**	**66**	**8.**	**Դեղագիտություն և թունաբանություն**	**63**
9.	**Կենսաբանություն և կենսաքիմիա**	**64**	**9.**	**Մոլեկուլային կենսաբանություն և գենետիկա**	**56**
10.	**Դեղագիտություն և թունաբանություն**	**39**	**10-11.**	**Նյութագիտություն**	**54**
			10-11.	**Հասարակական գիտություններ**	**54**
*) Գիտության բնագավառները բերված են ըստ Իսենշլ Սայնս Ինդիքեյթրս (Essential Science Indicators)-ի դասակարգման:					

Աղյուսակ 2. Հայաստանի գիտահետազոտական կազմակերպությունների և բուհերի կողմից 2006-2010 և 2011-2015 թվականներին հրապարակած և Վեբ օֆ Սայնս (Web of Science)-ի ԻնՍայտես (InCites) շտեմարանում ընդգրկված գիտական հոդվածների քանակով գիտության առաջին տասը բնագավառները (2016 թվականի օգոստոսի 8-ի դրությամբ):

Պետք է նշել, որ գիտական հոդվածների քանակն ըստ բնագավառների մնում է անհավասարաչափ բաշխված, և, որ հրապարակումների մեծամասնությունը վերաբերում է ֆիզիկային և տիեզերքի մասին գիտություններին. 2006-2010 թվականներին այդ բնագավառներում հրապարակվել է ընդհանուրի 55.7 տոկոսը, իսկ 2011-2015 թվականներին՝ 62.3 տոկոսը: Երկրորդ առանձնահատկությունը, որ 2011-2015 թվականներին առաջին տասնյակի մեջ է ներառվել նաև հասարակական գիտությունների բնագավառը 54 հրապարակումով: Մեկ միլիոն բնակչության հաշվարկով Հայաստանի Հանրապետության գիտական հոդվածների քանակը 2006-2010 և 2011-2015 թվականներին կազմել է տարեկան միջինում 171 և 256, ինչը գերազանցում է Արևելյան գործընկերության երկրների ցուցանիշը մոտ 2 անգամ (տե՛ս, Գծանկար 5):



Գծանկար 5. Արևելյան գործընկերության երկրների 2006-2015 թվականների գիտական հոդվածների քանակը մեկ միլիոն բնակչության հաշվարկով ըստ Վեբ օֆ Սայնս (Web of Science)-ի ԻնՍայտես (InCites) շտեմարանի տվյալների (2016 թվականի օգոստոսի 8-ի դրությամբ):

13. 2011-2015 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գործակալության կողմից ազգային հայտատուներին տրված գյուտերի արտոնագրերի ընդհանուր թիվը եղել է 490, իսկ 2006-2010 թվականներին՝ 761: Նույն ժամանակահատվածում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունում (այսուհետ՝ ՄՍՀԿ), Եվրոպական արտոնագրային գրասենյակում (այսուհետ՝ ԵԱԳ) և Ամերիկայի Միացյալ Նահանգների Արտոնագրային և ապրանքանիշային գրասենյակում (այսուհետ՝ ԱՄՆ ԱԱԳ) Հայաստանի գրանցված արտոնագրերի ընդհանուր քանակը եղել է համապատասխանաբար 26 և 28:

IV. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ (SWOT) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

14. Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրն իրականացվել է համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով առաջացած զարգացումների և նոր իրողությունների պայմաններում: Չնայած դրան, գիտության ոլորտը պահպանել է գիտական ներուժը, որոշ բնագավառներում, ինչպիսիք են, օրինակ՝ ֆիզիկան, աստղաֆիզիկան, քիմիան, կենսաբանությունը, ինֆորմացիոն տեխնոլոգիաները, հնագիտությունը և այլն, արձանագրվել է աճ և միջազգային մակարդակին համապատասխանող ձեռքբերումներ, որոշ չափով արդիականացվել են գիտական ենթակառուցվածքները, զարգացել է միջազգային համագործակցությունը, ներդրվել են մի շարք նոր նախաձեռնություններ: Միևնույն ժամանակ առկա են ոլորտի հետագա զարգացմանը չնպաստող թույլ կողմեր և մարտահրավերներ: Գիտության ոլորտի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և մարտահրավերների (SWOT) վերլուծությունն ունի հետևյալ տեսքը (տե՛ս, Աղյուսակ 3):

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
• Ուժեղ լաբորատորիաների/խմբերի առկայությունը մի շարք բնագավառներում՝ ֆիզիկա, աստղաֆիզիկա, ինֆորմացիոն տեխնոլոգիաներ, կենսաբանություն, կենսատեխնոլոգիա, հնագիտություն • Միջազգային կապերի բարձր մակարդակը • Միջազգային կազմակերպությունների մասնաճյուղերի, միջազգային համատեղ լաբորատորիաների ստեղծման լավ դինամիկան • Գիտական կադրերի պատրաստման մեջ	• Գիտության պետական ֆինանսավորման անբավարար մակարդակը • Գիտության ֆինանսավորման մեջ տնտեսության մասնավոր հատվածի մասնակցության ցածր մակարդակը • Գիտության և տեխնոլոգիաների ոլորտի կառավարման համակարգի անհամապատասխանությունը ժամանակակից չափանիշներին • Գիտության որոշ բնագավառներում բարձր որակավորում ունեցող կադրերի ոչ բավարար թվաքանակը

օտարերկրյա պետությունների մասնագետների ներգրավումը, ինչպես, օրինակ՝ ֆիզիկայի և ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառներում • Պետական բյուջեի ֆինանսավորման ծրագրերում օտարերկրյա պետությունների մասնագետների ներգրավումը • Գիտական հրապարակումների թվի զգալի աճը, մասնավորապես, «Web of Science» և «Scopus» գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկվածներինը • Սփյուռքի առկայությունը	• Գիտաշխատողների բարձր տարիքային կազմը, գիտական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի բացակայությունը • Գիտական կազմակերպությունների մեծամասնության զարգացման ռազմավարական ծրագրերի բացակայությունը • Գիտական ենթակառուցվածքների մեծամասնության անհամապատասխանությունն արդի չափանիշներին • Տնտեսության կողմից գիտական հետազոտությունների իրականացման պատվերների անբավարար մակարդակը • Գիտություն-արտադրություն կապի խրախուսման մեխանիզմների բացակայությունը • Կիրառական հետազոտությունների փոքրաթիվ քանակը • Միջդիսցիպլինար հետազոտությունների համակարգման ոչ բավարար մակարդակը • Միջազգային արտոնագրերի փոքր քանակը
Հնարավորությունները	**Մարտահրավերները**
• Գիտության ֆինանսավորման մեջ բյուջետային և արտաբյուջետային ֆինանսավորման ծավալների, այդ թվում՝ օտարերկրյա ֆինանսավորման ծավալների ավելացումը • Գիտություն-արտադրություն կապի խրախուսման մեխանիզմների ներդրումը • Գիտական կադրերի պատրաստման ժամանակակից համակարգի ներդրումը, մասնավորապես, Հայաստանի տեխնոլոգիական հետազոտական համալսարանի ստեղծումը • Տնտեսության մեջ կիրառելի գիտական արդյունքների ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների քանակի ավելացումը և որակի բարձրացումը • Տնտեսության մեջ գիտական արդյունքների ներդրման համակարգի ձևավորումը • «Հորիզոն-2020» ծրագրի ասոցացված անդամակցությունը • ԵՀՏ-ում խելացի մասնագիտացման տիրույթի ձեռքբերման հնարավորության ապահովումը • Սփյուռքի առկայությունը	• Ուղեղների արտահոսքը • Գիտության հասարակական վարկանիշի ցածր մակարդակը • Գիտական քննարկումների բացակայությունը հանրապետության զարգացման նպատակների նախանշման և դրանց ձեռքբերման ուղիների որոշման ժամանակ • Տնտեսության զարգացման ոչ բավարար մակարդակը • Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման դանդաղ տեմպերը • Կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի սիներգետիկ համակարգի բացակայությունը • Գիտության առանձնացված զարգացումը տնտեսությունից և հասարակությունից • Գիտության ֆինանսավորման մեջ արտաբյուջետային միջոցների, այդ թվում՝ օտարերկրյա, ներգրավմանն ուղղված թույլ ջանքերը

Աղյուսակ 3. Գիտության ոլորտի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և մարտահրավերների (SWOT) վերլուծությունը:

V. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

15. Գիտության ոլորտի թույլ կողմերի վերացմանը և մարտահրավերների պատասխաններին ուղղված հիմնական լուծումներն ըստ նպատակների հետևյալներն են՝

1) գիտության և տեխնոլոգիաների ոլորտի կառավարման համակարգի կատարելագործման ուղղությամբ՝

ա. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխանեցում արդի ժամանակների չափանիշներին,

բ. գիտության բնագավառի ոլորտային և միջոլորտային մոտեցմամբ օպտիմալացման և կառուցվածքային բարեփոխումների իրականացում, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում, անկախ գերատեսչական պատկանելությունից, միևնույն գիտական ուղղության պետական գիտական կազմակերպությունների միավորում,

գ. գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման ժամանակակից համակարգի ներդրում, պետական ֆինանսավորման ծավալների և արդյունավետության համապատասխանեցում,

դ. գիտության ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիայի ապահովում, այդ թվում՝ գիտության ֆինանսավորման մեջ տնտեսության մասնավոր հատվածի ներգրավման խրախուսման մեխանզմների ներդրում.

2) գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրման, գիտության ենթակառուցվածքների արդիականացման ուղղությամբ՝

ա. գիտական կադրերի պատրաստման պետական պատվերի ձևավորման մեխանիզմի ներդրում, գիտական աստիճանաշնորհման համակարգի և ասպիրանտական ուսուցման բովանդակային բարեփոխումների իրականացում, գիտական կադրերի պատրաստման նոր եղանակների ներդրում, մասնավորապես, հետազոտական համալսարանների ստեղծում՝ արտաբյուջետային միջոցների ներգրավմամբ,

բ. ուղեղների արտահոսքը դրանց շրջանառությամբ փոխարինելուն ուղղված մեխանիզմների ներդրում, այդ թվում՝ մասնագիտական կադրերի վերաինտեգրման ծրագրերի իրականացում,

գ. գիտական աշխատողի մասնագիտական կարիերայի առաջանցիկ զարգացման հստակ մեխանիզմների առավել գրավիչ համակարգի ներդրում, այն է՝ ասպիրանտուրա, հետդոկտորանտուրա, ժամանակավոր աշխատանք, մշտական աշխատանք և խորհրդատվական աշխատանքի իրավունք՝ կենսաթոշակի անցնելուց հետո,

դ. գիտության ոլորտի ենթակառուցվածքների արդիականացման, այդ թվում՝ գիտական սարքավորումների/լաբորատորիաների ձեռքբերման կամ ստեղծման դրամաշնորհային ծրագրերի իրականացում.

3) հիմնարար և կիրառական բնույթի՝ ներառյալ տնտեսության մեջ օգտագործվող և (կամ) երկակի նշանակություն ունեցող գիտելիքների ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանման ուղղությամբ՝

ա. հիմնարար հետազոտությունների պետական աջակցության ապահովում՝ որպես կիրառական մշակումների և ինովացիոն զարգացման հիմք,

բ. գիտական հետազոտությունների կենտրոնացում՝ գիտության և տեխնիկայի զարգացման արդի մակարդակին համապատասխանող հիմնախնդիրների լուծման վրա,

գ. տնտեսության մեջ օգտագործվող նոր գիտելիքների ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների պետական օժանդակության ապահովում,

դ. տնտեսության մեջ գիտական արդյունքների ներդրման խրախուսման համակարգի ձևավորում,

ե. երկրի պաշտպանունակության մակարդակի բարձրացմանն ուղղված երկակի նշանակության պետական գիտական և գիտատեխնիկական ծրագրերի մշակում և իրականացում.

4) կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի սիներգետիկ համակարգի ձևավորման նախադրյալների ստեղծման ուղղությամբ՝

ա. գիտության բնագավառում գիտական կամ գիտակրթական գերազանցության կենտրոնների ստեղծում (այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության հիման վրա), ոչ կայուն տարրերից բաղկացած համակարգից կայուն համակարգին անցնելու մեխանիզմների ձևավորում և ներդրում,

բ. գիտահետազոտական կազմակերպությունների և բուհերի ինտեգրման ծրագրերի մշակում և իրականացում,

գ. գիտական կամ գիտակրթական կազմակերպությունների համար նպաստավոր տնտեսական միջավայրի ձևավորում, գիտական նորամուծությունների կենտրոնների

ստեղծում, այդ թվում՝ նաև պետական և ոչ պետական գիտահետազոտական կազմակերպությունների հիմքի վրա,

դ. տնտեսական և հասարակական զարգացումներում նպատակների նախանշման և դրանց ձեռքբերման հաջողության գնահատման գիտական հենքի ապահովման մեխանիզմների մշակում և ներդրում.

5) հայագիտության ոլորտի առաջնային զարգացման ուղղությամբ՝

ա. հայագիտական հետազոտությունների պետական աջակցության ապահովում՝ որպես հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման և Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող ուղղություն,

բ. հայագիտության բնագավառի կադրերի պատրաստման ու վերապատրաստման մեջ օտարերկրյա պետությունների, առաջին հերթին՝ Սփյուռքի հայագետների ներգրավում,

գ. հայագիտության բնագավառում միջազգային համագործակցության զարգացում, այդ թվում՝ աշխարհի հայագիտական հաստատությունների միջև համագործակցության զարգացում, օտարերկրյա պետություններում գտնվող և հայ ժողովրդին վերաբերող պատմական, հոգևոր ու մշակութային արժեքների, մասնավորապես, արխիվների հայագիտական նյութերի ուսումնասիրության պետական աջակցության ապահովում.

6) միջազգային գիտական համագործակցության զարգացման, ԵՀՏ-ում խելացի մասնագիտացման տիրույթի ձեռքբերման ուղղությամբ՝

ա. գիտության բնագավառում միջազգային համագործակցության զարգացման, ինչպես նաև հանրապետության համար հեռանկարային համարվող ուղղություններն օտարերկրյա պետությունների, առանջին հերթին՝ ԵՀՏ-ի նմանօրինակ ուղղությունների հետ ինտեգրման պետական աջակցության ապահովում,

բ. «Հորիզոն 2020» ծրագրի մասնակցության արդյունավետության բարձրացման միջոցառումների իրականացում,

գ. ԵՀՏ-ում խելացի (smart) մասնագիտացման տիրույթի ձեռբերմանն ուղղված ծրագրերի շուրջ ռեսուրսների կենտրոնացում և պետական աջակցության ապահովում:

VI. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

16. Ծրագրի արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշները՝ ըստ նպատակների հետևյալներն են (տե՛ս, Աղյուսակ 4):

Գնահատման առանցքային ցուցանիշներ	
Գիտության և տեխնոլոգիաների ոլորտի կառավարման համակարգի կատարելագործում	
1.	Հետազոտությունների, մշակումների և ներդրումների վրա կատարված ներքին ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ, %
2.	Հետազոտությունների, մշակումների և ներդրումների վրա կատարված ներքին ծախսերի մեջ արտաբյուջետային ծավալների մասնաբաժինը, %
3.	Պետական գիտական կազմակերպությունների ծախսերի մեջ մասնավոր հատվածի ֆինանսավորման մասնաբաժինը, %
Գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրում, գիտության ենթակառուցվածքների արդիականացում	
1.	Գիտական աստիճանի վկայագիր ստացածների տարեկան թվաքանակը, մարդ
2.	Տվյալ տարվան նախորդող տասը տարիների ընթացքում գիտական աստիճանի վկայագիր ստացածների մեջ տվյալ տարվա պետական գիտական ծրագրերի կատարողների մասնաբաժինը,%
3.	Վերաինտեգրման ծրագրերի տարեկան քանակը և շահառուների թվաքանակը, հատ, մարդ
4.	Մրցութային հիմունքներով ձեռքբերված գիտական սարքավորումների / լաբորատորիաների տարեկան քանակը, հատ
Հիմնարար և կիրառական բնույթի՝ ներառյալ տնտեսության մեջ օգտագործվող և (կամ) երկակի նշանակություն ունեցող գիտելիքների ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանում	
1.	Վեբ օֆ Սայնս (Web of Science)-ում ընդգրկված գիտական հոդվածների տարեկան քանակը մեկ միլիոն բնակչության հաշվարկով, հատ
2.	Գիտության տվյալ բնագավառում բարձր ազդեցության գործակից ունեցող ամսագրերում (բնագավառի առաջին 10% և 25%-ը) հրապարակված գիտական հոդվածների տարեկան քանակը և մասնաբաժինը, հատ, %
3.	Գիտական հոդվածների տարեկան միջին ազդեցության գործակիցներն ըստ գիտության բնագավառների, թիվ
4.	ՄՍՀԿ, ԵԱԳ և ԱՄՆ ԱԱԳ-ում ներկայացված արտոնագրերի հայտերի տարեկան քանակը, հատ
5.	ՄՍՀԿ, ԵԱԳ և ԱՄՆ ԱԱԳ-ում գրանցված արտոնագրերի տարեկան քանակը, հատ
Կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի սիներգետիկ համակարգի ձևավորման նախադրյալների ստեղծում	
1.	Գիտական կամ գիտակրթական գերազանցության կենտրոնների քանակը, հատ
2.	Գիտահետազոտական կազմակերպությունների և բուհերի ինտեգրման ծրագրերի քանակը և շահառուների թվաքանակը, հատ, մարդ
3.	Գիտական նորամուծությունների կենտրոնների քանակը, հատ
Հայագիտության ոլորտի առաջնային զարգացում	
1.	Հայագիտական հետազոտություններին հատկացվող պետական ֆինանսավորման տարեկան ծավալների մասնաբաժինն ընդհանուրի մեջ, %

2.	Հայագիտության բնագավառում միջազգային համագործակցային ծրագրերի քանակը, հատ
3.	Հայագիտության բնագավառի գիտական հոդվածների տարեկան քանակը և դրա մեջ օտար լեզուներով հրապարակվածների մասնաբաժինը, հատ, %
4.	Հայագիտության բնագավառի մենագրությունների տարեկան քանակը և դրա մեջ օտար լեզուներով հրապարակվածների մասնաբաժինը, հատ, %
Միջազգային գիտական համագործակցության զարգացում, ԵՀՏ-ում խելացի մասնագիտացման տիրույթի ձեռքբերում	
1.	Օտարերկրյա աղբյուրներից գիտության ֆինանսավորման տարեկան ծավալների մասնաբաժինը հետազոտությունների, մշակումների և ներդրումների վրա կատարված ներքին ծախսերի մեջ, %
2.	Հայաստանի գիտական կազմակերպությունների և (կամ) բուհերի մասնակցությամբ իրականացվող միջազգային խոշորամասշտաբ համագործակցային ծրագրերի քանակը և շահառուների թվաքանակը, հատ, մարդ
3.	Հայաստանում գործող միջազգային գիտական կազմակերպությունների, դրանց մասնաճյուղերի, ինչպես նաև համատեղ գիտահետազոտական լաբորատորիաների/կենտրոնների/խմբերի քանակը, հատ
4.	«Հորիզոն 2020» ծրագրի մասնակցության հաջողության տոկոսը, %
5.	«Հորիզոն 2020» ծրագրի շրջանակներում իրականացվող դրամաշնորհներին մասնակցող գիտական կազմակերպությունների և բուհերի քանակը, հատ
6.	«Հորիզոն 2020» ծրագրի շրջանակներում իրականացվող դրամաշնորհներին մասնակցող մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացված հայտերի քանակը, հատ
7.	Օտարերկրյա պետությունների գիտնականների հետ համահեղինակությամբ հրապարակած գիտական հոդվածների տարեկան քանակը և մասնաբաժինն ընդհանուրի մեջ ըստ Վեբ օֆ Սայնս (Web of Science)-ի տվյալների, հատ, %
8.	ԵՀՏ-ի պետությունների գիտնականների հետ համահեղինակությամբ հրապարակված գիտական հոդվածների տարեկան քանակն ըստ Վեբ օֆ Սայնս (Web of Science)-ի տվյալների, հատ
9.	ԵՀՏ-ի պետությունների գիտնականների հետ համահեղինակությամբ հրապարակված գիտական հոդվածների տարեկան միջին ազդեցության գործակիցներն ըստ գիտության բնագավառների, թիվ
10.	ԵՀՏ-ի պետությունների գիտնականների հետ համահեղինակությամբ բարձր ազդեցության գործակից ունեցող ամսագրերում (բնագավառի առաջին 10% և 25%-ը) հրապարակված գիտական հոդվածների թեմատիկաների ուղղությամբ գիտակրթական կամ գիտական գերազանցության կենտրոնների ստեղծման ծրագրերի քանակը, հատ

Աղյուսակ 4. Ծրագրի արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշները՝ ըստ նպատակների:

17. Ծրագրի արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշների քանակական արժեքները որոշվում են ծրագրի իրականացման յուրաքանչյուր տարվա համար: Ցուցանիշների քանակական արժեքները սահմանվում են տվյալ տարվան հաջորդող երեք տարվա կտրվածքով՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) և ՀՀ ԳԱԱ-ի կողմից՝

հիմք ընդունելով տվյալ տարվան հաջորդող երեք տարիների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով գիտության ոլորտի ծախսերի կանխատեսումը:

VII. ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

18. Ծրագրի մոնիթորինգը ծրագրի ընդհանրական ներդրման, նպատակների ձեռքբերման և արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշների քանակական արժեքների կատարողականի ամենամյա գնահատումն է:

19. Ծրագրի մոնիթորինգն իրականացվում է կոմիտեի կողմից՝ ամենամյա պարբերականությամբ: Մոնիթորինգի արդյունքում կազմվում է համապատասխան հաշվետվություն, որն ընդգրկում է ծրագրի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝

1) նպատակների ձեռքբերման արդյունքները,

2) արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշների նախորդ տարվա կատարողականի գնահատականը,

3) արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշների քանակական արժեքների կանխատեսումը՝ հաջորդող երեք տարիների համար,

4) անհրաժեշտություն դեպքում առաջարկություններ՝ ծրագրի և ծրագրի միջոցառումների ժամանակացույցի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

20. Ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացվում կոմիտեի կողմից՝ ոչ ուշ, քան տվյալ տարվան հաջորդող երեք տարիների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատելուց հետո, երկամսյա ժամկետում:

21. Ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվության գնահատումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից ձևավորվող հանձաժողովի կողմից՝ ամենամյա պարբերականությամբ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի, շահագրգիռ նախարարությունների, կոմիտեի, ՀՀ ԳԱԱ-ի, գործարար շրջանակների, ինչպես նաև գիտական կազմակերպությունների և բուհերի ներկայացուցիչներ:

VIII. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

22. Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն.

2) արտաբյուջետային միջոցները, այդ թվում՝ դրամաշնորհները, ֆիզիկական և իրավաբանական անձանց, օտարերկրյա պետությունների գիտական և (կամ) գիտակրթական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային գիտական կազմակերպությունների կողմից տրամադրվող միջոցները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

IX. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

23. Ծրագրի իրականացման արդյունքում հնարավոր կլինի Հայաստանի Հանրապետությունում ձևավորել միջազգային ասպարեզում մրցունակ, ԵՀՏ-ի հետ ինտեգրված և այդ հետազոտական տարածքում իր մասնագիտացման տիրույթը (խելացի մասնագիտացում) ձևավորող ազգային գիտական համակարգ, որը կխթանի գերազանցությունը հիմնարար և կիրառական հետազոտություններում ու կնպաստի հանրապետության տնտեսական զարգացմանն ու առաջընթացին:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թ.
օգոստոսի 17-ի նիստի N 35
արձանագրային որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/հ	Միջոցառման անվանումը		Ակնկալվող արդյունքը	Ֆինանսավորման աղբյուրը	Պատասխանատու կատարողները	Ժամկետը
1	2		3	4	5	6
1.	**Գիտության և տեխնոլոգիաների ոլորտի կառավարման համակարգի կատարելագործում**					
	1.1	Գիտության ոլորտում օրենսդրության կատարելագործում, այդ թվում՝ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ	Գիտության ոլորտը կանոնակարգող հիմնական օրենքի համապատասխանեցում արդի ժամանակների պահանջներին	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2017թ.
	1.2	Գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման և պետական ֆինանսավորման ծավալների ու արդյունավետության համապատասխանեցման մեխանիզմների մշակում և ներդրում	Գիտական կազմակերպությունների պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2017թ.
	1.3	Գիտության ոլորտի օպտիմալացման և կառուցվածքային բարեփոխումների ծրագրերի մշակում և ներդրում	Գիտական հետազոտությունների արդյունավետության բարձրացում	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2017-2018թթ.

1	2		3	4	5	6
	1.4	Գիտության ֆինանսավորման մեջ տնտեսության մասնավոր հատվածի ներգրավման խրախուսման և գիտության ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիայի մեխանիզմների մշակում և ներդրում	Գիտության ֆինանսավորման ծավալների ավելացում	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2017-2020թթ.
2.	**Գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրում, գիտության ենթակառուցվածքների արդիականացում**					
	2.1	«Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգին և հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ	Գիտական աստիճանաշնորհման համակարգի արդիականացում՝ եվրոպական երկրների հետ համադրելի համակարգ ստեղծելու նպատակով: Գիտական կադրերի պատրաստման գիտակա-նորեն հիմնավորված պետական պատվերի մեխանիզմի ձևավո-րում և ներդրում	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողով գործակալություն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2017թ.
	2.2	Հայաստանի տեխնոլոգիական հետազոտական համալսարանի ստեղծման ծրագրի իրականացում	Կրթության և գիտության ինտեգրում, բարձրագույն մասնագիտական կրթության ժամանակակից եղանակների ներդրում	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2017-2020թթ.
	2.3	Գիտության ոլորտում կադրերի վերաինտեգրման ծրագրերի մշակում և ներդրում	Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ամրապնդում, ոլորտից կադրերի արտահոսքի նվազեցում:	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ	2017-2020թթ.

1	2		3	4	5	6
			2017 թվականից գիտահետազոտական կազմակերպությունների վարչական պաշտոններում աշխատանքային տարիքի սահմանափակում 70 տարեկանով	պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	
	2.4	Գիտական սարքավորումների/ լաբորատորիաների ձեռքբերման/ ստեղծման ծրագրերի իրականացում	Գիտության ոլորտի ենթակառուցվածքների արդիականացում, հետազոտական սարքավորումների ձեռքբերմանն ուղղված ֆինանսական ծախսերի օպտիմալացում	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե	2018-2020թթ.
3.	**Հիմնարար և կիրառական բնույթի՝ ներառյալ տնտեսության մեջ օգտագործվող և (կամ) երկակի նշանակություն ունեցող գիտելիքների ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանում**					
	3.1	ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների շրջանակներում հիմնարար գիտական հետազոտությունների դրամաշնորհային ծրագրերի իրականացում	Հիմնարար գիտական հետազոտությունների պետական աջակցության ապահովում	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2017-2020թթ.
	3.2	Երկակի նշանակություն ունեցող ծրագրերի իրականացում	Հատուկ գիտահետազոտական աշխատանքների խրախուսում	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ պաշտպանության նախարարության ռազմարդյունաբերության պետական կոմիտե	2017-2020թթ.
	3.3	Կիրառական բնույթի, այդ թվում՝ տնտեսության մեջ օգտագործվող գիտելիքների ձեռքբերմանն ուղղված ծրագրերի իրականացում՝ մասնավոր հատվածի հետ համաֆինանսավորման սկզբունքով	2018 թվականից սկսած գիտության ֆինանսավորման ծավալների հիմնական մասի ուղղորդում դեպի կիրառական և փորձակոնստրուկտորական ծրագրեր:Գիտական	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ	2017-2020թթ.

1	2		3	4	5	6
			հետազոտությունների և մշակումների բնագավառում խնդիրների ձևակերպման և լուծման մեջ տնտեսության մասնավոր հատվածի ներգրավում		գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	
	3.4	Գիտության բնագավառում հանրային-մասնավոր համագործակցության խթանման մեխանիզմների մշակում և ներդրում	Տնտեսության պահանջներից բխող հետազոտությունների իրականացում	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2017-2020թթ.
	3.5	Տնտեսության մասնավոր հատվածում գիտական հետազոտությունների և մշակումների իրականացումը խրախուսող մեխանիզմների մշակում և ներդրում	Գիտական հետազոտությունների և մշակումների բնագավառում տնտեսության մասնավոր հատվածի մասնակցության համար նպաստավոր պայմանների ստեղծում	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	2017-2020թթ.
4.	**Կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի սիներգետիկ համակարգի ձևավորման նախադրյալների ստեղծում**					
	4.1	Գիտական կամ գիտակրթական գերազանցության կենտրոնների ստեղծում այն բնագավառներում, որտեղ իրականացվում են միջազգային մակարդակին համապատասխանող հետազոտություններ	Միջազգային մակարդակին համապատասխանող հետազոտությունների զարգացում	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ	2017-2020թթ.
	4.2	Գիտահետազոտական կազմակերպությունների և բուհերի ինտեգրման ծրագրերի մշակում և իրականացում	Գիտության և կրթության ինտեգրում	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2017-2020թթ.

1	2		3	4	5	6
	4.3	Գիտական կազմակերպությունների համար նպաստավոր տնտեսական միջավայրի ձևավորման մեխանիզմների մշակում և ներդրում	Գիտական արդյունքի ներդրման պայմանների ստեղծման աջակցություն	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	2017-2020թթ.
	4.4	Գիտաինովացիոն ենթակառուցվածքների ստեղծման աջակցության մեխանիզմների մշակում և ներդրում	Գիտատար և ինովացիոն արտադրությունների աջակցության համար նպաստավոր պայմանների ձևավորում	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2017-2020թթ.
5.	**Հայագիտության ոլորտի առաջնային զարգացում**					
	5.1	Հայագիտության բնագավառի կադրերի պատրաստման մեջ օտարերկրյա պետությունների հայագետների ներգրավման ծրագրի մշակում և ներդրում	Հայագիտական բնագավառի կադրերի պատրաստման արդյունավետության բարձրացում	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2017-2020թթ.
	5.2	Հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին և ժառանգությանը վերաբերող ու օտարերկրյա պետություններում գտնվող արխիվների ուսումնասիրության ծրագրի մշակում և ներդրում	Հայագիտական հետազոտությունների շրջանակի ընդլայնում	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2017-2020թթ.
	5.3	Հայագիտության բնագավառում միջազգային համագործակցության զարգացման ապահովում, այդ թվում՝ աշխարհի հայագիտական հաստատությունների	Հայագիտական հետազոտությունների արդյունավետության բարձրացում	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2017-2020թթ.

1	2		3	4	5	6
		համագործակցության ընդլայնում		այլ միջոցներ		
6.	**Միջազգային գիտական համագործակցության զարգացում, Եվրոպական հետազոտական տարածքում խելացի մասնագիտացման տիրույթի ձեռքբերում**					
	6.1	Գիտության բնագավառում միջազգային համագործակցության զարգացման պետական միասնական ծրագրի մշակում և ներդրում	Միջազգային համագործակցության առաջնահերթությունների որոշում	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2017թ.
	6.2	Հանրապետության համար հեռանկարային համարվող ուղղություններն արտերկրի, առաջին հերթին՝ Եվրոպական հետազոտական տարածքի նմանօրինակ ուղղություններին ինտեգրելուն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում	Հանրապետության համար կարևոր նշանակության ուղղությունների զարգացում	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2017թ.
	6.3	«Հորիզոն 2020» ծրագրի մասնակցության աջակցության մեխանիզմների մշակում և ներդրում	«Հորիզոն 2020» ծրագրի մասնակցության արդյունավետության բարձրացում	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2017թ.
	6.4	Եվրոպական հետազոտական տարածքում խելացի մասնագիտացման տիրույթի ձեռբերմանն ուղղված ծրագրի մշակում և իրականացում	Միջազգային համագործակցության զարգացում, Եվրոպական հետազոտական տարածքում ուրույն տեղի ձեռքբերում	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2017-2020թթ.